**ԾԱՆՈՒՑՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՏԱԱԾ) մասին**

**ՏԱԱԾ խմբային դատալսումների որոշումները**

2009 թվականին Կալիֆորնիայի նահանգային իշխանությունը փորձ արեց կրճատել ՏԱԱԾ տնային ծառայության և այլ ժամերը: 2011 թվականին նահանգը փորձեց ժամերը կրճատել 20% -ով: 2009 թվականին Նահանգային իշխանությունը փորձեց կրճատել այն ՏԱԱԾ աշխատողների եկամուտը, ովքեր ժամական $9.50 -ից ավելի են ստանում:

ՏԱԱԾ շահառուներն ու արհմիությունները դատական հայց հարուցեցին և հասան կրճատումները ժամանակավորապես առկախելու մասին վճռի: Դատական այդ որոշումների վերանայման նպատակով Նահանգը դիմել է դատարան: Ոչ ոք չի կարող կանխատեսել արդյոք դատարանը կհաստատի՞ կրճատումները, թե՝ ոչ: Ներկայումս կողմերը հասել են որոշակի համաձայնության: Եթե դատարանը հաստատի այն, ապա

- ՏԱԱԾ ժամերի 20%-ի կրճատում չի լինի: Կլինի ընդամենը 8% -ի կրճատում սկսած 2013 թվականի հուլիսի 1-ից, մեկ տարի ժամկետով: Սա այժմյան թույլատրելի ժամերից 4.4%-ով պակաս է, քանի որ արդեն իսկ գործում է 3.6%-ի կրճատում, որ այս դատական գործերի մաս չի կազմում (3.6% + 4.4% = 8%):

- Մոտավորապես 2014-ի հուլիսին ՏԱԱԾ կրճատումը նվազելով կհասնի 7%-ի (3.4% -ի լրացուցիչ կրճատում ներկայիս 3.6% կրճատման վրա):

- ՏԱԱԾ աշխատավարձի նահանգային ֆինանսավորման կրճատումներ չեն նախատեսվում:

- Ձեր անձնական հանգամանքները փոխվելու դեպքում լրացուցիչ ժամերի համար կարող եք հայց ներկայացնել շրջանային իշխանություններին:

**Լրացուցիչ տեղեկությունների կամ ձեր առարկությունները դատարան ներկայացնելու համար**

Խմբային ծանուցման և կարգավորման համաձայնագրի օրինակները կարող եք ստանալ ձեր սոցապ բաժնից կամ շրջանային պետական մարմիններից: Մարամասներին կարող եք ծանոթանալ նաև հետևյալ կայքերից www.disabilityrightsca.org, www.altshulerberzon.com, www.dss.cahwnet.gov, և www.dhcs.ca.gov:

Կարող եք նաև հաղորդագրություն թողնել ՏԱԱԾ իրավաբանական խմբի ներկայացուցիչներին՝ 1-866-752-6679 հեռախոսահամարով:

## Բողոքարկման վերջին ժամկետն է 2013 թվականի մայիսի 3-ը:

Եթե այս որոշման դեմ առարկություններ չունեք, ապա պետք չէ ոչինչ ձեռնարկել: